

Հարգելի գործընկերներ և հյուրեր

Ողջունում եմ Ձեզ բոլորիդ Վճռաբեկ դատարանում և շնորհակալություն եմ հայտնում հրավերքն ընդունելու և մեր հետ այս տոնական սրամաղրությունը կիսելու համար:

Ժամանակակից հայ դատավորներին բաժին է հասել ծանր ժառանգություն: Դա ավանդաբար ձևավորված հասարակական անվստահության մթնոլորտն է դատարանների և դատավորների նկատմամբ:

Ելույթս նախապատրաստելիս փորձում էի վերհիշել, թե ժողովրդական բանահյուսության կամ թեկուզ կենցաղային լեզվական մշակույթում կա՞ն /կիրառվում են/ արդյոք դատավորի մասին դրական ասացվածքներ կամ բնորոշիչներ: Անկեղծորեն, չկարողացա մտաբերել այդպիսիք:

Փոխարենը կարելի է տասնյակներով հիշել անեկդոտներ, ասացվածքներ և որակումներ, որոնք բնութագրում են դատավորին որպես կողմնակալ, կաշառված և անազնիվ պաշտոնյայի:

Նկատեք, մենք մինչ օրս, թե օրենքի մակարդակով, թե դատական պրակտիկայում չենք ձևավորել դատավորի պաշտոնին հարիր պատշաճ դիմելաձև:

Ինչպե՞ս են դիմում մեր դատավորներին դատական նիստի ժամանակ և դրանից դուրս: «Պարոն դատավո՞ր», «Հարգելի դատավո՞ր», իսկ երբեմն նաև՝ «քաղաքացի՞ դատավոր»: Համաձայնեք, տարօրինակ և պատիվ չբերող վերաբերմունք է դատավորի նկատմամբ:

Եվ սա այն դեպքում, երբ նույնիսկ իրավական նիհիլիզմի խոր արմատներ ունեցող և ավանդաբար դատավորի նկատմամբ հատուկ վերաբերմունքով չառանձնացող Ռուսաստանում արդեն իրավական ավանդույթ է դարձել դատավորին ուղղվող «Ձերդ արժանապատվություն» դիմելաձևը: Եվ այդ դիմելաձևը գնալով հնչում է ավելի բնական, անկեղծ և հարգալից:

Բնական է, դատական գործունեության էությունն այնպիսին է, որ համընդհանուր սիրո և համակրանքի զգացումներ անհնար է ծնել: Դատավորը կանգնած է մրցակցող կողմերի միջև և որպես կանոն

ընդունում է այս կամ այն կողմին ձեռնտու որոշում, եթե դա քաղաքացիական հայց է: Իսկ հաճախ, հատկապես քրեական դատավարությունում, դժգոհ են մնում երկու կողմերն էլ:

Մակայն դատարանն ունի այլ բանի կարիք: Ես կասեի դրա կարիքն ավելի շատ ունի հենց հասարակությունը, քան դատարանը: Դատարանը պետք է հարգված լինի:

Այդ հարգանքը պետք է մատուցվի դատարանին որպես պետական իշխանություն կրող ինստիտուտի, քանզի դա հարգանքն է ժողովրդի նկատմամբ: Չէ՞ որ դատարաններն իրականացնում են ժողովրդին պատկանող իշխանական առաքելություն՝

Այս հարգանքը հասարակական համերաշխության երաշխիքներից է, առանց ինչի չի կարող գոյություն ունենալ քաղաքացիական հասարակությունը:

Ցավոք այս խնդրի կարևորությունը բացակայում է հասարակական գիտակցության մեջ: Ավելին, հասարակական գիտակցության ձևավորման գործում ազդեցիկ դերակատարություն ունեցող սոցիալապես ակտիվ խմբերը և միավորումները որևէ ջանք չեն գործադրում իրավիճակը բարելավելու ուղղությամբ:

Այս հարցում քննադատության սլաքն ուզում եմ ուղղել հատկապես դեպի դատախազներն ու փաստաբանները: Թեև վերջիններս ուղղակիորեն պետք է շահագրգռված լինեն դատական իշխանության հեղինակության ամրապնդմամբ, երբեմն այդ մասնագիտությունների առանձին ներկայացուցիչներ առիթը բաց չեն թողնում հասարակության աչքերում նվաստացնելու դատարանի և դատավորի առանց այն էլ ոչ բարձր հեղինակությունը:

Այս անկեղծ և մտահոգ քննադատությունս ամենևին նպատակ չունի թաքցնելու սեփական «մեղքերն» ու թերացումները:

Այո, հիմնական պատասխանատուն այս հարցում դատավորն է:

Դատավորների կողմից իրենց մասնագիտական պարտականությունների ազնիվ և բարեխիղճ կատարումը, նրանց անկախությունը դատական որոշումներ կայացնելիս երաշխավորում են իրավունքների արդյունավետ վերականգնումը, ամրապնդում են հասարակության

վստահությունը դատարանի արդարության, անկողմնակալության և անկախության մեջ:

Ուզում եմ գոհունակությամբ նշել, որ այսօր արդեն Հայաստանը կատարել է մի կարևոր քայլ առաջ այս հարցում: Դատավորների վարքագծի կարևորագույն նորմերն ստացել են օրենսդրական կանոնակարգում: Դրանք համընդհանուր են, տարածվում են բոլոր պրոֆեսիոնալ դատավորների վրա՝ անկախ զբաղեցրած պաշտնից և դատական ատյանի մակարդակից, ընդհուպ մինչև Վճռաբեկ դատարանի դատավորները:

Այդ իսկ պատճառով հատկապես կարևորվում է այն մեկնաբանությունների նշանակությունը, որոնք մենք այսօր ներկայացրել ենք Ձեր և հասարակության դատին:

Այդ մեկնաբանությունները հատկապես կարևոր են դատավորների համար, որոնք կրում են օրենքով սահմանված պարտավորություն խստագույնս պահպանել մասնագիտական վարքագծի կանոնները և որոնց խախտումը նրանց համար առաջացնում է ոչ միայն բարոյական և կարգապահական պատասխանատվություն, այլ օրենսդրական այլ ակտերով նախատեսված դեպքերում նաև իրավաբանական պատասխանատվության այլ տեսակներ, ընդհուպ մինչև քրեականը:

Արդարադատությունը չի կարող իրականացվել առանց ազնիվ և անկախ դատական կորպուսի: Այդ համակցության ազնվության և անկախության ապահովման նպատակով ամեն մի դատավոր պարտավոր է անձամբ պահպանել այդ նորմերը, ինչպես նաև մասնակցել դատական էթիկայի բարձր նորմերի ձևավորմանը և արմատավրմանը:

Վստահ եմ, այս մեկնաբանությունները կլինեն դատավորի լավագույն օգնականն այդ պատասխանատու հարցում:

Շնորհակալություն եմ հայտնում հեղինակային խմբին, մասնավորապես

Խորին շնորհակալությունս եմ հայտնում այս ձեռնարկի ստեղծմանը աջակցած կազմակերպություններին: